Ուրեմն, իմ բիզնեսը կառուցեցի եւ իմ ընտանիքը կազմեցի ներգրավելով Ռ. Դ. Ուայթ տարրական դպրոցի, Վիլսոն միջին դպրոցի եւ Գլենդելի միջնակարգի հետ: Շրջանավարտ լինելուց հետո, միջնակարգի ամերիկյան ֆուտբոլի ուրբաթները եւ ֆուտբոլի մարդիչի օրերը մնացին քաղաքի հիշատակներ, բայց անփոփոխ մնաց իմ մտահոգությունը քաղաքի համար:

Տարիներով, քաղխորհրդի նիստերին, պնդել եմ ֆինանսական ողջախոհության մասին, բայց միայն տեսել եմ չֆինանսավորված պարտք որը վճարում է շքեղ կենսաթոշակներ՝ 50 տարեկանին, անդադար սակերի հավելումներ եւ հարյուրավոր միլիոնների փոխառություններ՝ ընդհանուր բյուջեի պակասորդներ ծածկելու համար:

Տեսել եմ անխոհեմ ավելորդ շինարարություն՝ վատթարացող խճողումներով եւ աճող անխոհեմ վարորդությամբ: Տեսել եմ միլիոնավոր դոլարների արժողությամբ աշխատողների դատեր եւ աճող քաղաքային բյուրոկրատիա:

Քաղխորհրդի խնդիր է:

Կարծում եմ, որ կարող ենք ունենալ ավելի իմաստուն, ապահով, արդար, արտադրողական քաղաք: Կարծում եմ, որ պատասխանատու մարդիկ, ովքեր մտածում են ուրիշների համար, թվով ավելի են, քան նրանք, ովքեր աշխատում են ծառայեցնել համակարգը իրենց եսասեր նպատակներին:

Բայց կարիքն ունենք խղճամիտ քաղաքացիների, ովքեր, իրենց քվեներով, կջատագովեն թափանցիկությունը, կօժանդակեն մեր կյանքի որակին եւ կպահպանեն այն խոստումը, որն ես տեսել էի շատ տարիներ առաջ: Ահա ինչու ես կարիքն ունեմ ձեր քվեին:

Միասին, մենք կարող ենք շտկել սա:

/uun/ Herbert Molano

AR  
ME  
NI  
AN  
Հ  
Ա  
Յ  
Ե  
Ն  
Ե  
Ղ



**ՔԱՂԽՈՐՀՐԴԻ ԱՆՂԱՄԻ ՀԱՍԱՐ**

**CHAHE KEUROGHELIAN**

Տարիք 55  
Զբաղում Փոքր բիզնեսի տեր

Մինչ պատասխանատու եմ իմ որոշումների համար, ինչպես ամեն ընտրված պաշտոնատար, ես կաշառապանեմ այն արժեքները, որոնցից կախում ունի մեր անհատական և հավաքական հաջողությունը՝ հաշվետվություն, բարեկրթություն, ծանր աշխատանք, խմբական աշխատանք, մաքուր խաղարկություն:

Ես համձնառու եմ՝

- \* Խրախուսել ավելի համրային մասնակցություն և թափանցիկություն՝ քաղաքականության որոշումների գործում.
- \* Երկխոսությունը, և ոչ հակաբեկումը, վերածել հաղորդակցության գլխավոր ձևի միասին աշխատելու և մեր հասարակաց տեսիլքը կիսելու.
- \* Մատուցել հաստատուն աջակցություն մանր բիզնեսների.
- \* Անհրաժեշտ գումարներ հատկացնել ավագների և հաշմանդամների ծրագրերի.
- \* Խրախուսել քաղխորհրդի և դպրոցի հոգաբարձության կառուցողական համակարգործակցություն.
- \* Նպաստել իրավապահությանը ակտիվ համայնքային ներգրավմամբ և փոխադարձ հարգանքով.
- \* Ներդնել մեր երիտասարդությունում՝ նրան ավելի փայլուն ապագա ապահովելու համար:

Անդրադառնում եմ որ բոլորս չենք կարող համաձայնել բոլոր խնդիրներում, բայց միասին, կարող են զլենդել բարեփոխել՝ բոլոր անոնց համար, ովքեր բաժին ունեն մեր քաղաքում:

Եթե այս պատգամը արձագանգում է ձեր մտ, խնդրում եմ որ ինձ քվեարկեք: Ինչպես ես դուք, ես էլ խորապես հոգում եմ մեր քաղաքին և ցանկանում եմ լավագույնը զլենդելի համար: Իմ որոշումները հիմնված կլինեն իմ խղճի թելադրանքների վրա՝ զլենդելի լավագույն շահերի ի խնդիր: Ես դա փաստել եմ ծառայելով բազմաթիվ վարչություններում և ներկայիս՝ որպես Դիզայնի քննության հոգաբարձության անդամ:

/ստ/ Chahe Keuroghelian

**ՔԱՂԽՈՐՀՐԴԻ ԱՆՂԱՄԻ ՀԱՍԱՐ**

**ROLAND KEDIKIAN**

Տարիք 45  
Զբաղում Սնանկացման իրավաբան

Ժամանակները ծանր են: զլենդելը կարիքն ունի իսկական ղեկավարության վերջ տալու բյուջեի պակասորդներին, վերաշինելու քաղաքային ենթակառուցվածքը, պաշտպանելու բաց տարածքները և լուծելու մեքենաների խճողումը:

Ապրել ու աշխատել եմ այստեղ ավելի 15 տարի որպես սնանկացման իրավաբան, օգնելով մարդկանց իրենց կյանքը վերադասավորելու՝ պարտքից և աղետից հետո: Իմ կնոջ հետ, վարում եմ երկու հաջող իրավաբանական գրասենյակներ, որոնք տալիս են մատչելի, արդյունավետ օրինական ծառայություններ այն մարդկանց, ովքեր կարիքն ունեն պաշտպանվելու բանկային համակարգից, որը որսում է անենախոցելիները:

Պարկեշտություն և ծանր աշխատանք այն արժեքներն են, որոնց վրա կառուցել եմ իմ կյանքն ու ասպարեզը:

Ես համձնառու եմ ստեղծել՝

- հավասարակշռված քաղաքի բյուջե, որը շեշտում է արդյունավետությունը, ոչ միայն անվերջ փոխառություն և անխնայ ծախս.
- ջրի և էլեկտրականության եկամուտներ, որոնք կվերաշինեն մեր քաղաքի ենթակառուցվածքը, ոչ թե միայն կվճարեն քաղաքի ծախսերը.
- խելացի աճ, ոչ թե կայանման բացառություններ որոնք հավերժացնում են խճողումները:

Ես հասկանում եմ ինչպես հավասարակշռել բյուջեն, նաե՛լ զլենդելի բիզնես համայնքի կարիքները: Նաե՛լ հասկանում եմ մեր քաղաքի սովորական մարդկանց մտահոգությունները, ովքեր պայքարում են իրենց անենօրյա հացի համար: Ես հավատում եմ այս քաղաքին ու նրա պոտենցիալին: Քվեարկեք ինձ՝ Ռոլանդ Կեդիկյան, և միասնաբար կառուցենք ավելի լավ զլենդել, որտեղ բոլորս կարողանանք ծաղկել:

/ստ/ Roland Kedikian

**ՔԱՂԽՈՐՀՐԴԻ ԱՆՂԱՄԻ ՀԱՍԱՐ**

**SAM ENGEL**

Տարիք 59  
Զբաղում Թաղամասային ծառայությունների թոշակառու կառավարիչ

Մեր քաղխորհրդի որոշումներն ունեն ամենանշանակալից ազդեցությունը մեր ամենօրյա կյանքում, երբեմն ավելի՛ քան մեր նահանգի և դաշնային կառավարության որոշումները: Մեմ էնգելը թեկնածու է զլենդելի քաղխորհրդին, որովհետեւ նա հասկանում է որ մեր քաղաքն ու բնակիչները ծաղկում են երբ միանում ենք որպես համայնք:

Մեմ ամենաուժեղ թեկնածուն է և մեր քաղխորհրդին հետ կբերի անհրաժեշտ կենտրոնացում համայնքի վրա: Մեմի անցյալը վերջին քսան և ավելի տարիներին խոսում է իրենից: Նրա կենսագրությունը ցույց է տալիս այն արդյունքները, որոնք ստեղծվել են խմբերի և անհատների միջեւ համաձայնության կառուցմամբ:

Մեմը հասկանում է մեր քաղաքի խնդիրներն ու մտահոգությունները: Նրա առաջնահերթությունները կլինեն՝

- **Կառուցել** ապահով, լավ պահպանված թաղամասեր
- **Հավասարակշռել** մեր բյուջեն պատասխանատվությամբ և հաշվետվությամբ
- **Գործակցել** այլ գործակալությունների հետ՝ մեր ռեսուրսները առավելագույնս օգտագործելու համար
- **Հետ դարձնել** քաղխորհրդի կենտրոնացումը քաղաքականության ստեղծման և նպատակաուղղված որոշումների կայացման
- **Վերականգնել և ուժեղացնել** GWP-ի գործողություններն ու պահեստները
- **Խրախուսել** տնտեսական զարգացումը, որ ստեղծում է նոր գործեր միջին դասակարգի համար

Այս ընտրությունը այն մասին է, թե ինչպես մեր տեղական կառավարությունն ու բնակիչները կարող են միասին աշխատել զլենդելը ավելի լավ, ավելի բարգավաճ քաղաք դարձնելու համար: Sam Engel կլինի այդ ծայրը մեր քաղխորհրդում:

Քվեարկեք Մեմ էնգելին զլենդելի քաղխորհրդի համար  
Փորձված ♦ Հարգված ♦ Վստահված  
www.SamEngelForCityCouncil.com

/ստ/ Sam Engel

**ՉԵԿԱԿԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՐԻՉԻ ԴԱՍԱՐ**

**STEPHANIE V. LANDREGAN**

Տարիք՝ 60  
Զբաղում՝ Դաստիարակ / Կին գործարար

Քաղաքային վարչի գրասենյակը կարիքն ունի բարելավման: Քայլեր պետք է տրվեն Գլենդելում բիզնեսի արտոնությունների կլիման բարձրացնելու և ընտրություններում ավելի խիստ վերահսկողություն հաստատելու համար:

Ավելի քան 20 տարվա կառավարման փորձառություն ունեն Դարավային Կալիֆոռնիայի նահանգային և քաղաքապետական կառավարություններում:

Որպես տնօրեն Յու. Սի. Էլ. Էյ.ի համայնապատկերի ճարտարապետության ծրագրի, ղեկավարում են 70 օգնական ուսուցիչների, վարում և հավասարակշռում են ծրագրի բյուջեն և ուսումնական ծրագիրը, և վերահսկում են ուսուցիչների և խորհրդատուների ժողովները չորսամյա ծրագրի համար:

Ավելի քան 13 տարի ծառայել են որպես Գլենդել քաղաքի հանձնաժողովի անդամ և ծառայել են նահանգային հանձնաժողովում որպես նախագահ, փոխնախագահ և անդամ 2002 թվականից: Նաև ծառայում են մեր համայնքին որպես կամավոր անթիվ ժամեր քննելով քաղաքային զարգացման ծրագրեր և ծառայելով զանազան ոչ-շահութաբեր և բարեսիրական կազմակերպությունների հոգաբարձություններում:

Որպես երկարամյա Գլենդելի բնակիչ և բնակարանի տեր, խոր անձնական հանձնառություն ունեն քաղաքի զերգանցության նկատմամբ:

Գլենդելի բնակիչներին և այս գրասենյակի սրբությունը պահպանելու համար, խոստանում են որ մեր քաղաքի վարչի գրասենյակը կլինի թափանցիկ, մատչելի և բիզնեսի հանդեպ բարյացակամ:

Պատիվ կլինի ինձ համար, որ ստանամ ձեր քվեն և ծառայեմ որպես Գլենդելի քաղաքային վարիչ: [www.stephanielandregan.com](http://www.stephanielandregan.com).

/uun/ Stephanie Landregan

**ՉԵԿԱԿԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՐԻՉԻ ԴԱՍԱՐ**

**ARDASHES "ARDY" KASSAKHIAN**

Տարիք՝ 36  
Զբաղում՝ Քաղաքային վարիչ

Պատիվ է եղել ծառայել որպես ձեր քաղաքային վարիչը երկու շրջանների համար և հույս ունեն, որ կունենամ ձեր աջակցությունը մեր մեծ քաղաքին շարունակել ծառայելու համար:

Մենք անցկացրել ենք մեր պատմության ամենավատ տնտեսական ճգնաժամերից մեկը և, փորձառու ղեկավարության ու ռազմավարական որոշումների կայացման միջոցով, կարողացել ենք ծավալել որակն այն ծառայություններին, որոնք դուք ակնկալում եք մեր գրասենյակից: Սույլ երկու շրջանում հաջողվել ենք՝

- Տեսագրել և առջանց արխիվավորել քաղաքի և հանձնաժողովի ժողովները
- Թվայնացնել թղթային գործընթացները, ներառյալ՝ հանրային արձանագրությունների խնդրանքներ
- Կազմակերպել տեղեկատվական ֆորումներ քվեարկության և քաղաքացիական հարցերի մասին
- Ստեղծել քաղաքապետարանում կամավոր աշխատանքի ծրագրեր՝ միջնակարգի և համալսարանի ուսանողների համար
- Առջանց ներկայացնել ընտրությունների տեղեկությունները

Յուրաքանչյուր ամերիկացի դիմագրավում է մարտիրավեր՝ պահել իր կառավարությունը ներգրավող ու պատասխանող: Որպես ձեր քաղաքային վարիչը, ես կաշխատեմ այդ մարտահրավերները լուծել նորարար ու վճռական կերպով, մինչ խթանում են այնպիսի մթնոլորտ, որը քաջալերում է քաղաքային մասնակցությունը և արդար վերաբերում բոլորի համար:

Խորապես հավատում են, որ իմ կրթությունը, վարժեցումը, աշխատանքային փորձառությունը և տեսիլքը եզակիորեն որակավորում են ինձ այս անորոշ ժամանակներում քաղաքային վարիչի գրասենյակը ղեկավարելու համար: Դուրսով են, որ կստանամ ձեր քվեն 2 ապրիլի 2013 թ.:

Խնդրում են այցելել [www.ArdyforCityClerk.com](http://www.ArdyforCityClerk.com)՝ ավելի իմանալու համար իմ պլատֆորմի մասին:

/uun/ Ardashes Kassakhian

**ՉԵԿԱԿԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՆՉԱՊԱՅԻ ԴԱՍԱՐ**

**RAFI MANOUKIAN Դաշվապահ, Կառավարման մագիստրոս**

Տարիք՝ 52  
Զբաղում՝ Վկայված հանրային հաշվապահ, Քաղաքի արհեստագործ

Ես բնակվել եմ Գլենդել քաղաքում ավելի քան քսանհինգ տարի և իմ զավակները ծնվել ու մեծացել են Գոհար Քաղաքում:

Ասպարեզով վկայված հանրային հաշվապահ եմ՝ ավելի քան քսան տարվա փորձառությամբ, և ստացել եմ վարչական կառավարման մագիստրոսի տիտղոս: Տասը տարի ծառայել եմ Գլենդելի քաղաքին: Ծառայում եմ որպես հանձնաժողովի անդամ և նախագահ՝ Բուրբանկ-Գլենդել-Փասադենա օդակայանի իշխանության, ինչպես նաև BGP օդակայանի իշխանության ֆինանսների հանձնաժողովում, որտեղ քաղաքականության որոշումներ են տրվում իշխանության ներդրումների վերաբերյալ:

Նաև ծառայել եմ մեր երկրի օդային ուժերում չորս տարի և ստացել՝ պատվոգր արձակում և օդային ուժերի շնորհավորական մեդալը:

Քաղաքի գանձապահի դերն է քաղաքի գանձի և հարկատուի գումարների անկողմնակալ տնտեսավար լինել: Դարկավոր է ունենալ անկախ գանձապահ, որը կունենա կրթություն և փորձառությունը՝ առողջ ու պահպանողական կերպով վարելու հարկատուի գումարները և ուղղորդելու քաղաքի ներդրման և բյուջետային քաղաքականությունը: Ես ունեն կրթություն և փորձառությունը՝ արդյունավետ քաղաքի գանձապահ լինելու համար:

Խնդրում են ձեր վստահությունն ու ձեր քվեն:

/uun/ Rafi Manoukian

**ARMENIAN ԶԱՅԵՐԵՆ**

**ՄԻՋՈՑԱՌՈՒՄ Ա-Ի ԱՆԿՈՂԱՆԱԿԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ**

Այս միջոցառումը ներկայացվում է քվեարկողներին Գլենդեյլի քաղխորհրդի կողմից՝ չարտերը ուղղելու համար, որպեսզի քաղաքի գանձապահը նշանակվի քաղաքի կառավարչի կողմից ենթարկվելով քաղխորհրդի վավերացման, փոխան ընտրովի պաշտոն լինելուց: Թեև նշանակովի, պաշտոնը կլինի ըստ կամս պաշտոն, ի տարբերություն քաղաքի այլ բաժանմունքների տնօրենների: Ուղղումը նաև պահանջում է, որ նշանակված գանձապահը բավարարի որոշ նվազագույն որակումներ որոնք նշվել են Կալիֆոռնիայի կառավարման օրենսգրքում, ինչպիսիք են՝ առնվազն երեք տարվա փորձառություն որպես ավագ ֆինանսական կառավարման պաշտոնատար շրջանում կամ այլ հանրային գործակալությունում, որը զբաղվում է նման ֆինանսական պարտականություններով. առնչվող բնագավառում վավեր բակալավրի, մագիստրոսի, կամ դոկտորի աստիճան վարկավորված համալսարանից. Կալիֆոռնիայի Հաշվապահության հոգաբարձությունից, Վկայված ֆինանսական վերլուծաբանների ինստիտուտից կամ Գանձի կառավարման ընկերակցությունից թողարկված վկայական կամ վարկավորում:

Նշանակված քաղաքի գանձապահը կունենա իշխանություն՝ քաղաքի չօգտագործվող գումարները ներդնելու: Ուղղումը նաև կլիազորի քաղաքի կառավարչին՝ բանկային որոշ պարտավորություններ հատկացնելու ֆինանսական տնօրենին: Վերջապես, ուղղումը կպահանջի, որ ընտրված քաղաքի վարիչը ներկայացնի իր բոնդն ու երդումը քաղաքի իրավաբանին եւ ոչ թե քաղաքի գանձապահին:

Այս միջոցառումը պահանջում է քվեարկողների մեծամասնության վավերացումը: «Այո» քվեն այս միջոցառման կողմ քաղաքի գանձապահի պաշտոնը կվերածի նշանակովի պաշտոնի: «Ոչ» քվեն այս միջոցառման դեմ քաղաքի գանձապահի պաշտոնը կպահի որպես ընտրովի պաշտոն:

**ՎԵՐԵՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ Ա-Ի ԱՆԿՈՂԱՆԱԿԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ Է: ԵԹԵ ՈՒՋՈՒՄ ԵՔ ՈՒՆԵՆԱԼ ՊԱՏՃԵՆԸ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆ ԱՈՒԱՋԱՐԿՎԱԾ ՈՒՂՂՄԱՆ ԿԱՄ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՉԱՐՏԵՐԻՆ, ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԶԱՆԳԱԴԱՐԵԼ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԻՉԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻՆ՝ (818) 548-2090 ՀԱՄԱՐՈՎ, ԵՒ ՕՐԻՆԱԿՆ ԱՆՎՃԱՐ ՉԵՁ ԿՈՒՂԱՐԿՎԻ:**

/ստ/ ՄԱՅԶԼ Ե. ԳԱՐՍԻԱ  
Քաղաքի իրավաբան

**ՓԱՍՏԱՐԿ Ի ՆՊԱՍ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ A-Ի**

Ժամանակն է քաղաքականությունը դուրս բերելու քաղաքի զանձապահի պաշտոնից եւ նշանակել մեր քաղաքի զանձապահը՝ փոխանակ ընտրելու: Նշանակման գործընթացը պարզապես գերազանցում է ընտրության գործընթացին, քանզի հետազոտում է լավագույն թեկնածուն այս խիստ մասնագիտացած պաշտոնի համար:

Կալիֆոռնիայում 22 քաղաքներ կան, որոնք Գլենդելից ավելի մեծ են, եւ ավելի քան 80% չեն ընտրում իրենց գանձի կառավարիչները, ներառյալ Լոս Անջելես, Սան Դիեգո, Սան Խոսե, Սակրամենտո, Լոնգ Բիչ, Անահեյմ եւ Սանտա Անա քաղաքները:

Սա պատահական չէ: Ավելի մեծ քաղաքներն ունեն մեծ քաղաքային ֆինանսական պորտֆելներ, որոնք պահանջում են ավելի հմտություն նրանց գանձի կառավարիչներից, քան ավելի փոքր քաղաքների դեպքում: Նշանակման գործընթացը լավագույն ձեւն է նրանց գտնելու: Առաջին՝ միայն դիմում են մասնագետները՝ փողի կառավարիչները: Դիմորդները զնահատվում ու կանչվում են հարցազրույցի, որը հանգում է այն բանին, որ ամենից որակավորված թեկնածուն ընդունվում է աշխատանքի որպես պաշտոնի ամենահարմարը:

Ընտրության գործընթացը լավագույն ձեւն է ընտրելու քաղխորհրդի անդամներ, ովքեր իմանում են ամեն ինչի մասին: Թեկնածուները տալիս են քվեարկողներին նրանց տեսիլքը մեր քաղաքի ապագայի համար: Հաջող թեկնածուները կարիքն ունեն քվե շահելու լավագույն կարողություններ՝ նրանց պատգամը վաճառելու համար: Քվեարկողները հասկանում են: Նրանք ընտրում քաղաքականություն ստեղծողներ, ովքեր գործում են հանրության հայացքի տակ:

Մեր քաղաքի զանձապահի պաշտոնը փողի մասնագետի աշխատանք է. պետք չէ լինի քաղաքական պաշտոն: **Ընտրախիցը պետք չէ լինի այն վայրը, որտեղ որոշվում են փողի մասնագետի տեխնիկական կարողությունները:** Այս լիաժամ աշխատանքը պետք է ներգրավի մասնագետներ, ովքեր կարողությունն ունեն վարել մեր \$400 միլիոնանոց քաղաքային պորտֆելը: Փողի կառավարիչ լինելը ասպարեզի ընտրություն է՝ մասնագիտություն: Կարող փողի կառավարիչները կը դիմեն այնպիսի աշխատանքների, որոնք նշանակովի են: Քչերը կմտածեն քաղաքական թեկնածու դառնալու մասին՝ պաշտոնի ընտրվելու ու իրենց գործը կատարելու համար:

Գլենդելը պետք է միանա Կալիֆոռնիայի մեծագույն քաղաքներին, վավերացնի միջոցառում A-ն եւ ազատի նրա քվեարկողները դատելուց, թե ոս կարող է լինել մեր լավագույն փողի մասնագետը:

Ռոնալտ Թ. Բորուքի  
Քաղաքի զանձապահ  
Գլենդել քաղաք

**ՓԱՍՏԱՐԿ ԸՆԴԴԵՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ A**

Գլենդելի քաղաքացիները վերջին 30 տարիներին չեն քվեարկել որեւէ զանձապահի, ով նշանակված չլիներ պաշտոնակատար: Սովորական մեթոդն էր որ զանձապահը հրաժարվի ժամկետի կեսին եւ քաղխորհուրդը նշանակի հաջորդ զանձապահը, որը ներկայանում է ընտրության եւ առհասարակ հաղթում է որպես պաշտոնակատար:

Փոփոխության համար, այս անգամ քվեարկողները խոսք կունենան, թե ով կընտրեն որպես իրենց ներկայացուցիչը քաղաքի զանձապահի պաշտոնում:

Քաղաքի զանձապահի պաշտոնը ստեղծվում է մեր քաղաքի չարտրի կողմից եւ քաղաքի զանձապահի պաշտոնն է «ստանալ եւ անվտանգ պահել ու վճարել՝ ինչպես տնօրինվում է չարտրում, բոլոր գումարները որոնք պատկանում են քաղաքին եւ բոլոր գումարները որոնք ստացել է քաղաքի որեւէ գրասենյակ, հոգաբարձություն, բաժանմունք կամ աշխատող, եւ պահել ճշգրիտ հաշիվն ստացագրերի եւ ծախսերի»: Քաղաքի կանխիկ գումարների կառավարումը:

Գանձապահը չի ծախսում հարկատուների փողը, այլ նա իր աչքն է պահում նրա վրա՝ մեզ համար: Եւ ընտրյալ պաշտոնատարները, ովքեր ծախսում են հարկատուների փողը, ցանկանում են ազդել այն մարդուն ընտրությանը, ով հսկում է այդ փողին վրա: Ուզում եք, որ ձեր զանձապահը պարտական լինի քաղխորհրդի՞ն, թե՞ ձեզ՝ ընտրողներին:

Հիմնական հարցը, որին պետք է պատասխանել, այն է, թե ցանկանում ենք ավելի կամ պակաս ժողովրդավարություն: Եթե ցանկանում ենք պակաս ժողովրդավարություն, մեր բոլոր ներկայացուցիչները պիտի նշանակվեն թագավորի կողմից, իսկ եթե հավատում ենք մեկ անձ-մեկ քվեին, եթե հավատում ենք մեր ժողովրդավարությանը, եթե հավատում ենք, որ իշխանությունների բաժանումը բանալի հատկանիշ է մեր ժողովրդավարությանը, ուրեմն դուք պետք չէ աջակցեք քվեարկվող միջոցառմանը:

Քվեարկեք Ոչ միջոցառում A-ին:

Րաֆֆի Մանուկյան, վկայված հաշվապահ, կառավարման մագիստրոս  
Գլենդելի քաղխորհրդի անդամ

**ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԵՒ ԱՆԿՈՂԱՆԱԿԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ**

Այս միջոցառումը ներկայացվում է քվեարկողներին Գլենդեյլի քաղխորհրդի կողմից՝ չարտերը ուղղելու համար, որպեսզի նրա հաշվապահական եւ բյուջետային դրույթները համաձայն լինեն ընդհանրապես ընդունված հաշվապահական սկզբունքներին (GAAP): Չարտերը նշում է տասը հատուկ ֆոնդեր՝ Գլենդեյլի ջրի եւ էլեկտրականության ընկերության (GWP) էլեկտրական եւ ջրային կոմունալ ծառայությունների եւ ընդհանուր ֆոնդի գործողությունները հաշվելու համար: Այս ուղղումը նպատակադրում է փոփոխել չարտերը՝ ռացիոնալացնելով հաշվապահական կառույցն ու նվազեցնելով ընդհանուր ֆոնդին եւ GWP-ի էլեկտրական եւ ջրային ֆոնդերի հետ կապված ֆոնդերի թիվը, բայց շարունակում է մատակարարել վերոհիշյալ ֆոնդերի բոլոր գործողություններին ու գործունեություններին համար: Այս ուղղումը կպահանջի քաղաքից պահել անջատ ֆոնդեր՝ հատուկ գործառնությունների համար, ինչպես պահանջում են դաշնային կամ նահանգային օրենքները, չարտերի դրույթները, GAAP-ը, կամ կորոշի քաղխորհրդի գործողությունը: Նաեւ նշում է, որ քաղխորհուրդը կարող է թելադրել քաղաքականություններ, որոնք առնչվեն կանխիկ գումարների պահեստներին:

Չարտերը ներկայումս պահանջում է, որ քաղաքը տարեկան փոխանցի գումար, որը հավասար է GWP-ի գործողության տարեկան եկամուտների 25%-ին՝ բացառելով առանձնապես նշված մեծածախ առեւտրի եկամուտները, GWP-ի լրացուցիչ գումարների ֆոնդից դեպի ընդհանուր պահեստի ֆոնդ: Քաղխորհուրդը կարող է նվազեցնել կամ չկատարել փոխանցումը՝ GWP-ի ֆինանսների առողջությունը ապահովելու համար: 2011-2012 թ. բյուջետային տարում, այս փոխանցման գումարը հավասար էր էլեկտրական կոմունալ ծառայությունների տարեկան ընթացիկ եկամուտների 12%-ին, առանց ջրի եկամուտների փոխանցման: Ներկա չարտերի դրույթի նպատակն է լիազորել GWP-ի տարեկան համախառն եկամտի տվյալ տոկոսի փոխանցումը՝ կոմունալ ծառայությունների ֆոնդից դեպի ընդհանուր ֆոնդ:

Չարտերը, սակայն, ներկայումս նշում է, որ փոխանցումը պիտի կատարվի GWP-ի լրացուցիչ գումարների ֆոնդից: Գործողությունների եկամտի այս տեսակ փոխանցման կատարումը պահեստի կամ լրացուցիչ գումարների ֆոնդից ներկայումս խախտում է GAAP-ը: Այս ուղղումով, դրույթը կհամաձայնի GAAP-ի հետ, պահանջելով որ փոխանցումը կատարվի էլեկտրական եւ ջրային կոմունալ ծառայության ֆոնդից (որքանով թույլատրվում է նահանգային օրենքով): Այս ուղղումը չի փոփոխի փոխանցման հաշվարկման մեթոդը եւ չի ավելացնում առավելագույն տոկոսը, որը կարող է փոխանցվել բյուջետային տարեշրջանում: Ուղղումը փոփոխում է փոխանցման պահը, որպեսզի այն լինի բյուջետային գործընթացի համաձայն՝ ֆինանսական տարվա սկզբնավորության, նրա վերջում լինելու փոխարեն:

Այս միջոցառումը պահանջում է քվեարկողների մեծամասնության վավերացումը: «Այո»-ի քվեն միջոցառման ի նպաստ կուղղի չարտերը, որպեսզի ցուցնի GAAP-ի ներկա պահանջները եւ հստակացնի GWP-ի փոխանցման վճարման աղբյուրը: «Ոչ» քվեն ընդդեմ միջոցառման կպահի ներկա կարգավիճակը:

**ՎԵՐԵՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԵՒ ԱՆԿՈՂԱՆԱԿԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ Է: ԵԹԵ ՈՒՋՈՒՄ ԵՔ ՈՒՆԵՆԱԼ ՊԱՏՃԵՆԸ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՈՒՂԱՆԱԿԱՆ ԿԱՍ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՉԱՐՏԵՐԻՆ, ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՁԱՆՎԱԴՐՈՒԵԼ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԻՉԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻՆ՝ (818) 548-2090 ՀԱՄԱՐՈՎ, ԵՒ ՕՐԻՆԱԿՆ ԱՆՎՃԱՐ ՉԵՁ ԿՈՒՂԱՐԿՎԻ:**

/ստ/ ՄԱՅԶԸ 6. ԳԱՐՍԻԱ  
 Քաղաքի իրավաբան

**ՓԱՍՏԱՐԿ Ի ՆՊԱՍ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ Ե-Ի**

**ՔՎԵԱՐԿԵՔ ԱՅՈ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ Ե-ԻՆ**, որպեսզի թարմացվեն քաղաքի հաշվապահական դրույթները եւ մատուցվի ավելի արդյունավետ տեղեկատվություն քաղաքի ֆինանսների մասին:

Միջոցառում Ե կռահցիոնալացնի եւ կթարմացնի չարտերը, որպեսզի նա համաձայն լինի արդի հաշվապահական պրակտիկային: Քաղաքը ներկայումս պահպանում է ֆոնդեր, որոնք անհրաժեշտ չեն այսօրվա կառավարական հաշվապահական չափորոշիչները գործադրելու համար: Փոխարենը, բազմաթիվ ֆոնդեր պահպանվում միայն գործադրելու հնացած չարտերի դրույթներ, որոնցից շատերը ստեղծվել 1920 թթ., 1930 թթ. եւ 1940 թթ.: Սա ստեղծում է ավելորդ բարդություններ բյուջետավորման եւ կառավարման ընթացքում, եւ իսկապես ձեւը դարձնում է ավելի կարեւոր, քան բովանդակությունը: Հպատակելով ընդհանրապես ընդունված հաշվապահական սկզբունքներին (GAAP), քաղաքը ճշգրտորեն հաշվետու կլինի նրա զանազան գործունեությունների եւ գործողությունների համար, ներառյալ Ընդհանուր ֆոնդի եւ Գլխնդելի ջրի եւ էլեկտրականության (GWP) գործողությունները:

Հաշվապահական պրակտիկայի հաճախակի փոփոխությունների պատճառով, որոնք հրահանգում են հատուկ հաշվապահական պահանջներ, ներառյալ ֆոնդերի հաստատումը եւ փոփոխություններ ֆոնդերի կառուցվածքի մեջ, չարտերը պետք է ավելի ճկուն լինի կանոններում այս դինամիկ փոփոխություններին հետեւելու համար: Այս ճկունությունը կթոյլատրի ավելի արդյունավետ եւ թափանցիկ հաշվապահություն ու ֆինանսական տեղեկագրություն:

Միջոցառում Ե-ն նաեւ կջնջի որեւէ երկդիմություն քվեարկողից վավերացված քաղաքի ընդհանուր ֆոնդին GWP-ի գործունեության եկամուտների փոխանցումի նկատմամբ: Այս լեզուն չի ավելացնում կամ փոփոխում փոխանցումը կամ նրա հաշվարկման մեթոդը, այլ պարզապես ապահովում է, որ փոխանցման հաշվապահությունը չի հակասում GAAP-ին: Այս միջոցառման վավերացումը չի խանգարում ծրագրի սակագներին:

«ԱՅՈ» քվեն կապահովի, որ քաղաքը հաշվում ու տեղեկագրում իր զանազան ֆոնդերը այնպիսի կերպով, որը հետեւում է արդի ընդհանրապես ընդունված հաշվապահական սկզբունքների:

- /ստ/ Ֆրանք Քինթերո, քաղաքապետ
- /ստ/ Լորա Ֆրիդման, քաղխորհրդի անդամ
- /ստ/ Արա Նաջարյան, քաղխորհրդի անդամ
- /ստ/ Դեյվ Ուիվեր, քաղխորհրդի անդամ

**ՓԱՍՏԱՐԿ ԸՆԴՂԵՄ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ Ե-Ի**

«Այս միջոցառումը փոփոխում է չարտերի XI-րդ հոդվածի բաժինները՝

- Ջնջում է GWP արժեզրկման ֆոնդերը (§17), որտեղ GWP եկամուտները պետք է դրվեն մի կողմ «նորմալ արժեզրկում» ծածկելու համար, եւ օգտագործվեն կոմունալ ծառայության «նորոգման, փոխարինման, բարելավման եւ երկարաձգման»:
- Ջնջում է GWP ավելորդ գումարների ֆոնդը (§22), որի ներիսքը ավելորդ գումարներն են որ մնացել են տարվա վերջում, **կոմունալ ծառայության բոլոր կարիքների բավարարումից հետո** (§§20 եւ 22). Այս ավելորդ գումարների ֆոնդի արտահոսքը սահմանափակված է GWP կարիքների, բացի այն գումարից, որը հավասար է կոմունալ ծառայության ընթացիկ եկամուտների 25%-ին եւ կարող է փոխանցվել ընդհանուր պահեստի ֆոնդին (§22): ԱՅՍ ԱՎԵԼՈՐԴ ԳՈՒՄԱՐԸ ՄԻՎԿ ԼԻՎՋՈՐՎԱԾ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄՆ Է GWP ՓՈՂԵՐԻ՝ GWP-ԻՑ ՏԱՐԲԵՐ ՆՊԱՍԱԿՈՎ:
- Ջնջում է հատուկ կարիքների ընդհանուր պահեստի ֆոնդը (§15), որը փոխ տալիս է կանխիկ գումարներ, երբ լինում է կարիքը, քաղաքի ուրիշ հաշիվների:
- Ջնջում է ներկա արգելքը GWP-ի եկամուտների փոխանցման ընդհանուր բյուջետային ֆոնդին (§14), որը վճարում է ընթացիկ ծախսեր, եւ հրահանգում է որ ծառայության ընթացիկ եկամուտների մինչեւ 25% փոխանցվի այդ ֆոնդին, մնան ծախսեր վճարելու համար:

Այս 25%-ը, առաւել ծառայության հարկը, նշանակում է, որ մոտավորապես սակագնի վճարողների 1/3-ի դոլարները կարող են շեղվել ջրի եւ էլեկտրականության մատակարարումից: Մեզ ասում են, թե ծառայության ենթակառուցվածքը խոր կարիքն ունի ճակատագրական բարելավումների, եւ, առանց սակագնի հավելումը, չկա GWP-ի փող որ վճարի դրանց համար: Մինչ այդ, շուրջ \$21,000,000 GWP-ի հաշվեցույցեր որոնք կրնային վճարել այս բարելավումները՝ տարեկան կերպով փոխանցվում են ընդհանուր բյուջեի ֆոնդին, ընթացիկ ծախսեր վճարելու համար, թեւ չարտերը բացառում է նրանց այնտեղ գնալը: Քվեարկեք «ՈՉ»: Կանխեք GWP-ի եկամուտների դեմ այս արշավի օրինականացումը, որը վնասում է ծառայության: «ՈՉ» ասում է՝ «ՈՉ GWP-ի փոխանցումներին մինչեւ որ բավարարվեն GWP-ի բոլոր կարիքները»:

Վերջապես, 11 դեկտեմբերի 2012 թ. քաղխորհրդի ժողովին, անկախ հաշվեքննիչները հրապարակով հայտնել են, որ ավելորդ գումարների ֆոնդից փոխանցումները չեն խախտում հաշվապահական սկզբունքները»:

Ստորագրությունները Vanguardians սպաների:

/ստ/ Ֆրանսիսկո Ալոնսո, նախկին քաղաքապետ, Մոնտերեյ Պարկ քաղաք, փոխ նախագահ, Վանկվարդիանս ընկերություն

/ստ/ Դոկտ. Ջոն Կրաֆտ, փոխնախագահ, օրենսդրական կապ, Վանգվարդիանս ընկերություն

ARMENIAN 3 1 3 5 7 7



**ՄԻՋՈՑԱՌՈՒՄ Ը-Ի ԱՆԿՈՂԱՆԱԿԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ**

Այս միջազատումը ներկայացվում է քվեարկողներին Գլենդեյլի քաղխորհրդի կողմից՝ չարտերը ուղղելու եւ հնացած լեզու հանելու համար, որպեսզի փոփոխվի վարչական ծառայությունների տնօրենի պաշտոնական տիտղոսը եւ դառնա ֆինանսների տնօրեն:

Ներկայումս, չարտերը պահանջում է որ քաղխորհուրդը հրամանագրով մատակարարի մանր կանխիկ գումարներ՝ բյուջեներում նշված ծախսերի վճարման համար, որոնք այլապես չի կարելի վճարել հարմար ու խնայողական ձեւով: Այս ուղղումը կջնջի այդ պահանջը, եւ փոխարենը թույլ կու տայ, որ նման մանր կանխիկ վճարումներ կատարվեն արդեն բյուջետավորված ծախսերի դիմաց, ըստ բյուջետային գործընթացի:

Չարտերը նաեւ պահանջում է, որ մինչեւ ամեն տարվա հունիսի ամսի առաջին օրը, քաղաքի կառավարիչը ներկայացնի բյուջեի նախագիծ քաղխորհրդին: Չարտերը չի նշում, թե մինչեւ որ ամսաթիվը պետք է վավերացվի բյուջեն: Առաջարկված ուղղումը հանում է մինչեւ հունիս 1 բյուջե ներկայացնելու պահանջը, եւ այն փոխարինում է պահանջով, որ բյուջեն որդեգրվի մինչեւ 30 հունիս՝ ամեն տարի:

Ուղղումը պահանջում է, որ բոնդերը վաճառվեն հանրային վաճառքով միայն, իսկ եթե չստացվի որեւէ բավարարող առաջարկ, քաղխորհուրդը կարող է մերժել բոլոր ընդունված առաջարկները եւ այնուհետեւ վաճառել հիշյալ բոնդերը հանրային կամ մասնավոր վաճառքով: Ուղղումը առաջարկում է, որ բոնդերը կարող են վաճառվել բանակցված կամ մրցակցային գործընթացով՝ ըստ քաղխորհրդի որոշման:

**ՎԵՐԵՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ Ը-Ի ԱՆԿՈՂԱՆԱԿԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ Է: ԵԹԵ ՈՒՋՈՒՄ ԵՔ ՈՒՆԵՆԱԼ ՊԱՏՃԵՆԸ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՈՒՂՈՒՄՆ ԿԱՄ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՉԱՐՏԵՐԻՆ, ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԶԱՆԳԱԴՆԱՐԵԼ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԻՉԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻՆ՝ (818) 548-2090 ՀԱՄԱՐՈՎ, ԵՒ ՕՐԻՆԱԿՆ ԱՆՎՃԱՐ ՁԵՁ ԿՈՒՂԱՐԿՎԻ:**

/ստ/ ՄԱՅՔԼ Ծ. ԳԱՐՍԻԱ  
Քաղաքի իրավաբան

**ՓԱՍՏԱՐԿ Ի ՆՊԱՏ ՄԻՋՈՑԱՄԱՆ Ը-Ի**

**ՔՎԵԱՐԿԵՔ ԱՅՈ ՄԻՋՈՑԱՄԱՆ Ը-ԻՆ** քաղաքի չարտերը թարմացնելու համարը: Ժամանակի ընթացքում, չարտերի որոշ պահանջներ հնացել են:

Չարտերը պահանջում է որ քաղաքի հրամանագրով մատակարարի մանր կանխիկ գումարներ՝ բյուջեներում նշված ծախսերի վճարման համար, որոնք այլապես չի կարելի վճարել հարմար ու խնայողական ձևով: Արդի համակարգչային համակարգերի պատճառով, սա հնացած պրակտիկա է, որովհետև մանր կանխիկ վճարումները սահմանափակված են մանր ծախսերի եւ կատարվում արդեն բյուջետավորված ծախսերի դիմաց:

Չարտերը պահանջում է, որ քաղաքի կառավարիչը ներկայացնի բյուջեի նախագիծ քաղաքի ղեկավարին մինչև 1 հունիսի: Իրոք, քաղաքի ղեկավարը բյուջեի գործընթացը սկսում է 1 ապրիլին կամ դրանից ավելի շուտ: Այս ուղղումը կպահանջի որ, անկախաբար գործընթացի սկզբնավորումից, հավասարակշռված բյուջեն ՊԵՏՔ Ե ՎԱԿԵՐԱՑՎԻ մինչև 30 հունիսի:

Չարտերը ներկայացնում պահանջում է, որ բոնդերի թողարկման դեպքում, բոնդերը պետք է վաճառվեն միայն հանրային վաճառքով՝ մրցակցային գործընթացով, իսկ եթե չստացվի բավարարող առաջարկ, քաղաքի ղեկավարը կարող է մերժել բոլոր ստացած առաջարկները եւ այնուհետև վաճառել հիշյալ բոնդերը հանրային կամ մասնավոր վաճառքով: Որոշ դեպքերում, բանակցված բոնդերի վաճառքները ավելի արդյունավետ են ու քաղաքը վճարում է ավելի ցածր տոկոսներ: Յուրաքանչյուր բոնդի թողարկումը մրցակցային հանրային վաճառքով ծախսելու պահանջը հանելով եւ բանակցված բոնդի վաճառք թույլատրելով՝ երբ լինի ավելի խնայողական կամ արդյունավետ, քաղաքը կունենա խնայողություններ, առավել ճկունություն եւ կջնջի ոչ արդյունավետության աղբյուրներ:

ԱՅՈ քվեարկել կապահովի, որ չարտերը թարմանա եւ համաձայն լինի ներկա քաղաքի պրակտիկայի հետ:

/ստ/ Ֆրանք Քինթրո, քաղաքապետ

/ստ/ Լորա Ֆրիդման, քաղաքի ղեկավարի անդամ

/ստ/ Արա Նաջարյան, քաղաքի ղեկավարի անդամ

/ստ/ Դեյվ Ուիլկեր, քաղաքի ղեկավարի անդամ

**ՓԱՍՏԱՐԿ ԸՆԴՊԵՍ ՄԻՋՈՑԱՄԱՆ Ը-Ի**

«Քվեարկեք «ՈՉ»»: Այս ուղղումը ավելորդ է: Պակասեցնում է քաղաքի ղեկավարի լիազորությունները, ջնջում է կանխիկ գումարների կառավարման հաշվետվությունը, դուռ է բացում գումարների գողացման ջնջելով գումարների պահանջը խորհրդի վավերացումից հետո. ջնջում է բազմամյա բյուջեի հնարավորությունը եւ փոփոխում է մրցակցային առաջարկների գործընթացը բոնդերի վաճառքի համար, դուռը բացելով բանակցված առաջարկների, որոնք, ըստ Բորսայի հանձնաժողովի (SEC), ստեղծում են այն հնարավորությունը, որ ֆինանսական ծառայությունների մատակարարները օգտագործեն ընտրարշավների նպաստներն ու կապերը ձեռք բերելու գործարքներ, որոնք կարող են չհամապատասխանել հանրային շահերին: Այդ մտահոգությունները կենտրոնն էին SEC-ի բոնդերի շուկային հետաքննություններին, որոնք ներառում էին հետևյալ խնդիրները՝

- Վճարել խաղալու համար (ֆինանսական ծառայությունների մատակարարները կատարում են քաղաքական նպաստներ՝ ֆինանսական ծառայությունների պայմանագրեր ձեռք բերելու համար)
- Շահերի բախումներ (քաղաքապետության հետ կապված անձինք որ հարաբերություններ ունեն ֆինանսական ծառայությունների ընկերությունների հետ)
- Անպատշաճ տեղեկությունների հայտնություն
- Գների թափանցիկության պակաս եւ չափազանց հավելումների բոնդերի գներում
- Կասկածելի վաճառքի սովորություններ

SEC-ը գտել է, որ ֆիրմաների մեծ մասը կատարել է նշանակալից քաղաքական նպաստներ եւ դրանք, որոնք կատարել են նպաստներ, սովորաբար նաեւ միեւնույն ֆիրմաներն էին, որոնք քաղաքապետական բիզնեսի հետամուտ էին:

Քաղաքական նպաստների եւ ազդեցության վաճառքի շուրջ գալթակցությունները, որոնք ներգրավել են բարձրաստիճան պաշտոնատարներ արժեթղթային առաջնակարգ ֆիրմաներում մղել են Ուոլ Սթրիթի 17 ֆիրմաներ ներկայացնող գործադիր տնօրենների կոչ ընելու, որ արգելք հաստատվի նրանց քաղաքապետական բոնդերի բաժանմունքների քաղաքական նպաստների վրա: Այդ ֆիրմաները ներկայացնում էին մոտավորապես քաղաքապետական ֆինանսավորման բիզնեսի 75 տոկոսը: Եյուդի ինքնակառավարման մարմինը՝ Քաղաքապետական արժեթղթերի կանոնադրման հոգաբարձությունը (MSRB), առաջարկեց կանոն՝ Ուոլ Սթրիթի ֆիրմաների կողմից բիզնեսի հետ կապված նպաստների աճը սահմանափակելու համար: MSRB-ն վավերացրեց G-37 կանոնը, որն արգելեց քաղաքապետական գործարք անողներին որոնք տվել էին քաղաքական նպաստներ հաճախորդներին՝ առաջիկա երկու տարիներին այդ հաճախորդների հետ բիզնես անելուց: Փաստվեց, որ G-37 կանոնը անհարմար էր:

**Քվեարկեք ՈՉ՝ բյուջեային պատասխանատվություն կառավարություն պրոպագանդելու եւ կոռուպցիայի առիթ կանխելու համար»:**

Մտորագրությունները Vanguardians սպաների:

/ստ/ Ֆրանսիսկո Ալոնսո, նախկին քաղաքապետ, Մոնտերեյ Պարկ քաղաք, փոխ նախագահ, Վանկվարդիանս ընկերություն

/ստ/ Դոկտ. Ջոն Կրաֆտ, փոխնախագահ, օրենսդրական կապ, Վանգվարդիանս ընկերություն

ARMENIAN 3 1 3 5 7 7

---

---

---



46¢ Stamp  
46¢ դրոշմ



**OFFICE OF THE CITY CLERK  
AND ELECTION SERVICES  
613 E BROADWAY ROOM 110  
GLENDALE CA 91206-4393**

**Send back entire page - fold in half & tape closed.**  
Ետ ուղարկեք ամբողջ էջը՝ ծալեք մեջտեղից և ծրարեք: /

OFFICE OF THE CITY CLERK  
AND ELECTIONS SERVICES  
613 E BROADWAY, ROOM 110  
GLENDALE CA 91206-4393  
818/ 548-2090  
FAX 818/ 241-5386



PRSR STD  
U.S. POSTAGE  
**PAID**  
Permit No. 15  
Santa Ana, CA

Send back entire page - fold in half & tape closed.  
Ետ ուղարկեք ամբողջ էջը՝ ծալեք մեջտեղից և ծրարեք:

BT  
**19-255-1 A**

**POLLING PLACE OR DROP YOUR "VOTE-BY-MAIL" BALLOT OFF HERE**

**SEE ABOVE!! DO NOT RETURN THIS CARD IF YOU ARE A PERMANENT VOTE BY MAIL VOTER!**

<b>APPLICATION TO "VOTE BY MAIL" - CITY OF GLENDALE</b> <b>GENERAL MUNICIPAL ELECTION - TUESDAY, APRIL 2, 2013</b>				To obtain a vote by mail ballot, complete the information on this form. This application <b>MUST BE RECEIVED</b> by the elections official by <b>March 26, 2013.</b>	
PRINT NAME: _____					
RESIDENCE ADDRESS: (AS REGISTERED)		_____ <small>Number and Street</small>			
<b>MAIL MY BALLOT TO:</b> (If different from above)		_____ <small>Number and Street Code</small>		_____ <small>City</small>	_____ <small>Zip</small>
<b>SIGNATURE</b>		_____ <b>SIGNATURE OF APPLICANT</b> (Must be signed to be processed)		_____ <small>Date</small>	_____ <small>Daytime Phone No.</small>
_____ <small>Date of Birth</small>					

**ՏԵՍԵՔ ԿԵՐԵՎՈՒՆ: ՅԵՏ ՉՈՒՂԱՐԿԵՔ ԱՅՍ ՔԱՐՏԸ ԵՑԵ ԴՈՒՔ ՄԱՅՈՒՆ ԿԵՐՊՈՎ ՔՎԵԱՐԿՈՒՄ ԵՔ ՓՈՍՏՈՎ:**

ԴԻՄՈՒՄ «ՔՎԵԱՐԿԵԼ ՓՈՍՏՈՎ» ՔՎԵԱԹԵՐԹԻԿԻ ՀԱՄԱՐ ՔԱՂԱՔ GLENDALE ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, ԱՊՐԻԼ 2, 2013 ՏՊԱՏԱՌՈՎ ԳՐԵՔ ՉԵՐ ԱՆՈՒՆԸ:				Փոստով քվեարկելու քվեաթերթիկի ձեռք բերելու համար լրացրեք այս դիմումը մինչև: Ընտրությունների պաշտոնյան այս դիմումը ՊԵՏՔ ԵՒ ՍՏԱՆԱ ոչ ուշ, քան ընտրություններից 7 օր առաջ: <b>ԵՐԵՔՇԱԲԹԻ, ՄԱՐՏ 26, 2013</b> ԱՌՅՆ ԴԻՄՈՒՆ ԶԻ ԸՆԴՈՒՆԿԻ ԱՌԱՏ ԴԻՄՈՒՆ ՍՈՒՅՁ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ	
ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ (ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՉԱՅՆ)		_____ <small>Հասցեի թիվ եւ փողոց</small>			
ՔՎԵԱԹԵՐԹԻԿԻ ՈՒՂԱՐԿԵԼ ԱՅՍ ՀԱՍՑԵՆՈՎ (ԵՔԵ տարբերվում է վերոհիշյալ հասցեից)		_____ <small>Քաղաք</small>		_____ <small>Ինդեքս</small>	_____ <small>Ինդեքս</small>
<b>ԴԻՄՈՒՆ</b>		_____ <b>ԴԻՄՈՒՆ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (ամհրաժեշտ է դիմումը վավերացնելու համար)</b>		_____ <small>Ամսաթիվ</small>	_____ <small>Ցերեկային հեռախոսահամարը</small>
_____ <small>Օճնդյան թիվը</small>					